ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 2


«25» 02 2009թ. N 03/16/1039-09

ՀՀ կառավարության
աշխատակազմի ղեկավար
պարոն Դ. Սարգսյանին

Հարգելի պարոն Սարգսյան

ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվում «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյանի գյուղական համայնքի հողերի կատեգորիան փոխելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (փաթեթը կցվում է):

Առդիր՝ 1 փաթեթ:

Հարգանքով՝

Վ. Տերտերյան

52

ՀՀ [illegible] ԹՅԱՆ
[illegible]
ԸՆԴՀ. ԵՎ ԻՆ ՔԵԹԻՆ
Մուտք թիվ 025-2405
25-02-09


Տեղական ինքնակառավարման
վարչություն, հեռ. 511-344

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2009 թվականի N_____ -Ն

ՀՈՂԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի N 1077-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյանի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համայնքի վարչական սահմաններում գտնվող իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 1.2218 հեկտար վարելահողերը՝ համաձայն հավելվածի, փոխադրել հատուկ պահպանվող տարածքների հողերի կատեգորիա՝ սկաուտական ճամբար կառուցելու համար:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերի նպատակային նշանակության փոփոխումից հետո երեք տարվա ընթացքում չկառուցապատելու դեպքում սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը չեղյալ է համարվում:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյանի գյուղական համայնքի ղեկավարին՝ ապահովել.

1) հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

2) Սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետով գանձված ֆինանսական միջոցները ուղղել համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմայի կամ գլխավոր հատակագծի կազմմանը:

4.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին՝ հսկողություն իրականացնել սույն որոշման 2-րդ և 3-րդ կետերի կատարման նկատմամբ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### « ՀՈՂԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ՀՀ կառավարության որոշման նախագծի

ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապատասխան հողերի նպատակային նշանակության փոփոխությունը կատարում է ՀՀ կառավարությունը՝ հողաշինարարական ու քաղաքաշինական փաստաթղթերի հիման վրա:

ՀՀ Լոռու մարզի Շահումյանի համայնքի ղեկավարը հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով ներկայացրել է իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 1.2218 հեկտար վարելահողերը, փոխադրել հատուկ պահպանվող տարածքների հողերի կատեգորիա՝ սկաուտական ճամբար կառուցելու համար:

Նշված համայնքի հողերի կատեգորիան փոխելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծով նախատեսված է իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 1.2218 հեկտար վարելահողերը, փոխադրել հատուկ պահպանվող տարածքների հողերի կատեգորիա՝ սկաուտական ճամբար կառուցելու համար:

Նշված համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեման հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծով նախատեսված սխեման ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել հողային օրենսգրքի /մասնավորապես 6-րդ, 7-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ, 57-րդ և 64-րդ հոդվածների/ պահանջներին համապատասխան և ՀՀ կառավարության 2001 թ. հունվարի 17-ի «Հողերի օգտագործման սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» N 30 որոշման 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված կարգով:

Միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացության հիման վրա հողերի օգտագործման ժամանակավոր սխեման համաձայնեցվել և հաստատվել է ՀՀ քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության նախարարությունների, ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից:

ՀՀ քաղաքաշինության, ՀՀ գյուղատնտեսության և ՀՀ բնապահպանության նախարարությունների, ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կարծիքները դրական են:

Համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայի վերաբերյալ առկա են համայնքի ավագանու որոշումը՝ (սխեմային հավանություն տալու մասին), մարզպետի համաձայնությունը (մարզային հանձնաժողովի եզրակացության հիման վրա) :

Հողերի օգտագործման ժամանակավոր
սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական
հանձնաժողովի նախագահ Վ. Տերտերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՍԽԵՄԱ

Հավելված

ՀՀ կառավարության 2009թվականի
.............................. ..............ի
N ..........Ն որոշման




* Ծանոթագրություն

① Հատուկ պահպանվող 1.2218 հա

/իրավաբանական անձ. սեփ./

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 13.08.01 թ. N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի

Հանձնաժողովը 2008 թվականի հոկտեմբերի 7-ի նիստում քննարկելով Լոռու մարզի Շահումյան համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարվող փոփոխությունների վերաբերյալ նյութերը, առաջարկում է ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարություն նախարարությունների և գերատեսչությունների հաստատմանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Ժ. Եգորյան

անդամներ՝ Ս. Մկրտչյան

Ս. Ծատուրյան

Ա. Վարդանյան

Ա. Ասատրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ք.Վանաձոր, Հայքի հրապարակ

Հեռ. 4-61-92
Fax 2-28-77

N. 029/1765-01
« 17 » 07 2008 թ.

ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՍԽԵՄԱՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ
ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Վ.ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տերտերյան

Ներկայացնում եմ ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեման, 7 օրինակից, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության ծրագրով սկաուտական ճամբարի ստեղծման համար հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու նպատակով:

ՄԱՐԶՊԵՏ [signature] Ա.ՔՈՉԱՐՅԱՆ

Կատ.՝ Ռ.Քոչարյան
Հեռ. (0 322) 2-03-91

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

4 հուլիսի 2008թ. թիվ 211-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅԻ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ կառավարության 2001թ. հունվարի 17-ի «Հողերի օգտագործման սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 30 որոշմամբ հաստատված կարգի, հաշվի առնելով Շահումյան համայնքի ավագանու 2008թ. հունիսի 26-ի թիվ 16 որոշումը՝

Տալ համաձայնություն Շահումյան համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմային:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՔՈՉԱՐՅԱՆ

2008թ. հուլիսի 4
ք.Վանաձոր

ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 112
ք.Վանաձոր

03.07.2008

# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅԻ ՄԱՍԻՆ

Քննարկելով համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեման Լոռու մարզպետի 16 փետրվարի 2007թ. թիվ 23 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովը որոշեց՝ Լոռու մարզի Շահումյան համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով նախատեսված գյուղատնտեսական նշանակության 1.2218 հեկտար հատուկ պահպանվող հողերի կատեգորիա փոխադրվող հողամասերի վերաբերյալ տալ դրական եզրակացություն:

Ա.Քոչարյան — հանձնաժողովի նախագահ, Լոռու մարզպետ

Հանձնաժողովի անդամներ .

Ա.Վարդերեսյան — ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ

Վ.Բունիաթյան — մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Վ.Անտոնյան — մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

Ռ.Քոչարյան — մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

"26" հունիսի "2008թ.

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 16

### ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ՏԻՄ օրենքով, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի 12.06.2008 թ. թիվ 210/1491-01 գրությունը և «ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ոչ առևտրային կազմակերպության հայտը՝ կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 1.2218 հա հողամասում երիտասարդական ամառային ճամբար հիմնելու նպատակով հողամասերը հատուկ պահպանվող հողերի կատեգորիա փոխադրելու վերաբերյալ, համայնքի ավագանին

## ՈՐՈՇՈՒՄ Է

Տալ համաձայնություն ՀՀ կառավարության 19.09.2002 թ. թիվ 1504-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում առաջարկվող փոփոխությանը՝ «ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 1.2218 հա հողամաս, որից

1. 0.1935 հա վարելահող ծածկագիր 06-084-316-039
2. 0.3823 հա վարելահող ծածկագիր 06-084-316-040
3. 0.2895 հա վարելահող ծածկագիր 06-084-316-047
4. 0.3565 հա վարելահող ծածկագիր 06-084-316-041

երիտասարդական ամառային ճամբար հիմնելու նպատակով հատուկ պահպանվող հողերի կատեգորիա փոխադրելուն:

Շահումյանի գյուղապետ Ս. Ա[illegible]
26. 06. 2008թ.
գ. Շահումյան

ավագանու անդամներ կողմ [illegible] ձայնով

Ս. Ղազախեցյան
Փ. Դալլաքյան
Վ. Արարատյան
Ս. Եղիազարյան
Ա. Հովսեփյան

# ՀԱՏԱԿԱԳԻԾ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 1.2218 ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻ /ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ/ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՀՈՂԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱ ՓՈԽԱԴՐՎՈՂ
ՀՈՂԱՄԱՍԻ

Մ 1:5000



ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան և Լերմոնտովո գյուղական համայնքների տարածքում Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության սկաուտական ճամբարի ստեղծման նպատակով հատուկ պահպանվող հողերի կատեգորիա փոխադրելու վերաբերյալ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը Երիտասարդական ամառային ծրագրերի շրջանակներում ձեռնամուխ է եղել սկաուտական ճամբարի ստեղծման աշխատանքներին: Այն նախատեսվում է իրականացնել Լոռու մարզի Լերմոնտովո և Շահումյան համայնքների վարչական տարածքում՝ միմյանց հարևանությամբ գտնվող հողերում: 2008թ. ընթացքում այս ծրագրին մասնակցելու նպատակով Սփյուռքից Հայաստան կժամանեն շուրջ 300 երիտասարդներ:

Հարկ է նշել, որ նշված ծրագիրը հավանության է արժանացել նաև ՀՀ վարչապետի կողմից:

Վերոհիշյալ տարածքում Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունն արդեն սեփականության իրավունքով ձեռք է բերել 6.3 հեկտար ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողեր, որից 5.7967 հեկտարը վերոհիշյալ նպատակի համար փոխադրվում է հատուկ պահպանվող հողերի կատեգորիա:

Ծրագիրն արդեն իսկ իրականացման փուլում է, հողատարածքի գեոդեզիական հետազոտությունն ու ճամբարի հատակագծային պլանավորումն ավարտված են: Ճամբարը ժամանակին շահագործման հանձնելու համար անհրաժեշտ է շուտափույթ սկսել տնակների մոնտաժման աշխատանքները և լուծել տարածքի կոմունիկացիոն հարցերը:

Վերը նշված աշխատանքների իրականացման նպատակով անհրաժեշտ է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը սեփականության իրավունքով պատկանող 5.7967 հա գյուղատնտեսական նշանակության հողամասերը փոխադրել հատուկ պահպանվող հողերի կատեգորիա՝ սկաուտական ճամբար ստեղծելու նպատակով:

-Լերմոնտովո համայնքի վարչական տարածքից՝ 4.5749 հա, որից 2.352 հա վարելահող, 2.2229 հա խոտհարք:

-Շահումյան համայնքի վարչական տարածքից՝ 1.2218 հա վարելահող:

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԲԱԺՆԻ ՊԵՏ Ռ.ՔՈՉԱՐՅԱՆ

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան գյուղական համայնքի տարածքում Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությանը սկաուտական ճամբարի ստեղծման նպատակով հատուկ պահպանվող հողերի կատեգորիա փոխադրելու վերաբերյալ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը Երիտասարդական ամառային ծրագրերի շրջանակներում ձեռնամուխ է եղել սկաուտական ճամբարի ստեղծման աշխատանքներին: Այն նախատեսվում է իրականացնել Լոռու մարզի Լերմոնտովո և Շահումյան համայնքների վարչական տարածքում՝ միմյանց հարևանությամբ գտնվող հողերում: Շահումյան համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով նախատեսվում է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը սեփականության իրավունքով պատկանող 1.2218 հեկտար վարելահող, գյուղատնտեսական նշանակության հողերի կատեգորիայից, փոխադրել հատուկ պահպանվող հողերի կատեգորիա՝ սկաուտական ճամբարի ստեղծման նպատակով:

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ և ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԲԱԺՆԻ ՊԵՏ Ռ.ՔՈՉԱՐՅԱՆ

AGBU
**ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION**
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ
55 East 59th Street, New York, NY 10022-1112 U.S.A. T: 212 319-6383 • F: 212 319-6507/08 • E: agbuny@agbu.org • W: www.agbu.org

**ARMENIAN REPRESENTATION**
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆ
9 Alex Manoogian St., Yerevan 0070, Armenia
Tel.: (37410) 51-22-51, Fax: (37410) 51-22-52, Email: agbu@aua.am

13 հունիսի, 2008

Տիար Արամ Քոչարյան
ՀՀ Լոռու մարզպետ

Հարգելի պարոն մարզպետ,

Շնորհակալությամբ ստացանք Ձեր 2008 թվականի հունիսի 10-ի N-041/1476-01 թվագիր նամակը Լոռու մարզի Լեռնահովիտ և Շահումյան գյուղերի վարչական տարածքներում Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությանը (ՀԲԸՄ) սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողատարածքների կարգավիճակի փոփոխման վերաբերյալ:

Ինչպես Ձեզ արդեն տեղեկացրել էինք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը (ՀԲԸՄ) նպատակ ունի երիտասարդական ամառային ճամբար հիմնել վերոհիշյալ տարածքում:

Այս նպատակով շնորհակալ կլինեինք Ձեր աջակցության համար սեփականության իրավունքով ՀԲԸՄ-ին պատկանող Լեռնահովիտ գյուղի երկու՝ 2,22 և 2,35 հա և Շահումյան գյուղի չորս՝ 0,1935; 0,3823; 0,3565 և 0,2895 հա, ընդհանուր մակերեսով 5,79 հա հողերի կարգավիճակի փոփոխման հարցում, որը թույլ կտար այն վերածել հանգստի համար նախատեսված հողերի:

Կից ներկայացնում ենք սեփականության իրավունքով ՀԲԸՄ-ին պատկանող հողատարածքների սեփականության վկայականների պատճենները:

Կանխավ շնորհակալությամբ՝

Աշոտ Ղազարյան
ՀԲԸՄ Հայաստանի
Ներկայացուցչության տնօրեն

CENTRAL BOARD OF DIRECTORS:
**PRESIDENT** - BERGE SETRAKIAN. **VICE PRESIDENT** - ARSHAVIR GUNDJIAN. **TREASURER** - SAM SIMONIAN. **SECRETARY** - BERGE PAPAZIAN.
**HONORARY MEMBER** - HIS HOLINESS KAREKIN II, Catholicos of All Armenians.
**MEMBERS** - *United States* M. MICHAEL ANSOUR, CAROL BAGDASARIAN ASLANIAN, JOSEPH BASRALIAN, YERVANT DEMIRJIAN, NAZARETH FESTEKJIAN, ARDA NAZERIAN HARATUNIAN, SARKIS JEBEJIAN, LEVON NAZARIAN, SINAN SINANIAN, DICKRAN TEVRIZIAN. *Argentina* RUBEN KECHICHIAN. *France* ARIS ATAMIAN, LEVON KEBABDJIAN. *Switzerland* VAHE GABRACHE. *Syria* VASKEN YACOUBIAN.
**DIRECTOR EMERITUS** - BARRY ZORTHIAN.
**COUNCIL OF TRUSTEES** - SARKIS DEMIRDJIAN, RICHARD MANOOGIAN, NAZAR NAZARIAN, LOUISE MANOOGIAN SIMONE, KARNIG YACOUBIAN.
**IN MEMORIAM** - BOGHOS NUBAR, *Founder*; ALEX MANOOGIAN, *Honorary Life President*.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ԵՎ
ՏԱՎՈՒՇԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ

ք.Վանաձոր | հեռ.4-41-52

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

## Տեղազննման եզրակացություն

Լոռու մարզի Շահումյան համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով նախատեսված գյուղի արևելյան մասում գտնվող, Վանաձոր-Դիլիջան ճանապարհի աջ կողմում, «Թեժ լեռ» ռեստորանի մոտ ավտոճանապարհից 150 մետր հեռավորության վրա գտնվող գյուղատնտեսական նշանակության 1.2218 հեկտար վարելահողերում երիտասարդական ճամբար ստեղծելու նպատակով հատուկ պահպանվող հողերի կատեգորիա փոխադրվող հողամասերում իմ կողմից կատարվել է տեղազննություն, որի արդյունքում պատմության և մշակույթի հուշարձաններ չեն հայտնաբերվել:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ԵՎ
ՏԱՎՈՒՇԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ Հ.ԽԵՉԻԿՅԱՆ
15.07.2008թ.

ՎԿԱՅԱԿԱՆԸ ՏՐՎԱԾ Է Սեփականության ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

սեփականության (օգտագործման)

«Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն» ոչ առևտրային

սեփականատիրոջ(օգտագործողի) անունը անվանումը

կազմակերպությանը

Լոռու մարզ գ. Շահումյան

(անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը)

Հողամասի ՆԿԱՏՄԱՄԲ

Թիվ 3428, 20/05/2008 հաստատված առուվաճառքի պայմանագրի

(անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթղթի անվանումը)

ՀԻՄԱՆ ՎՐԱ

ԳՐԱՆՑՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ, ԳՈՒՅՔԻ ՆԿԱ ՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ

06-084-005-002 ՄԱՏՅԱՆԻ 007 ՀԱՄԱՐԻ ՏԱԿ

ՍՈՒՅՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ԿԱԶՄՎԱԾ Է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ, ՄԵԿԸ ՏՐՎՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ (ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ), ՄՅՈՒՍԸ ՊԱՀՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՈՒՄ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Գ. Անդրեասյան

(ստորագրություն) Անուն,Ազգանուն

Կ.Տ.

« 22 » 05 2008 թ.

1872604

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

1 : 2000

(Մասշտաբ)




| Հատված | Երկարություն (մ) | Սահմանակից հարեւան |
|---|---|---|
| 1 – 2 | 101.54 | 316–040 |
| 2 – 3 | 20.34 | ճանապարհ |
| 3 – 4 | 98.74 | 316–038 |
| 4 – 1 | 19.23 | ճանապարհ |

Կատարող՝ ______ Ս. Մուրադյան
(ստորագրություն) (Անուն,Ազգանուն)

______ Ա. Առաքելյան
(ստորագրություն) (Անուն,Ազգանուն)

## ՀՈՂԱՄԱՍԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ 06-084-316-039

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ Գյուղատնտեսական նշանակության հողեր

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ Վարելահող

ՀՈՂԱՄԱՍԻ ՉԱՓԸ (հա) 0.1935

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ Սեփականություն

## ՇԵՆՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍ (քմ)

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ

## ՇԻՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

| Հ/Հ | ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ | ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ | ՄԱԿԵՐԵՍԸ (քառ.մ) | ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

Լրացուցիչ նշումներ, փոփոխություններ

Կատարող՝

(ստորագրություն) Ա. Մելիքյան (Անուն,Ազգանուն)

(ստորագրություն) Ն. Պողոսյան (Անուն,Ազգանուն)

ՎԿԱՅԱԿԱՆԸ ՏՐՎԱԾ Է Սեփականության ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

սեփականության (օգտագործման)

«Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն» ոչ առևտրային

սեփականատիրոջ(օգտագործողի) անունը անվանումը

կազմակերպությանը

Լոռու մարզ գ. Շահումյան

(անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը)

Հողամասի ՆԿԱՏՄԱՄԲ

Թիվ 3431, 20/05/2008 հաստատված առուվաճառքի պայմանագրի

(անշարժ գույքի ձեռքբերման իրավունքը հաստատող փաստաթղթի անվանումը)

ՀԻՄԱՆ ՎՐԱ

ԳՐԱՆՑՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ, ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ

06-084-005-002 ՄԱՏՅԱՆԻ 002 ՀԱՄԱՐԻ ՏԱԿ

ՍՈՒՅՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ԿԱԶՄՎԱԾ Է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ, ՄԵԿԸ ՏՐՎՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ (ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ), ՄՅՈՒՍԸ ՊԱՀՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՈՒՄ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ

ՊԵՏԱՎԱՐ` Գ. Անդրեասյան

(ստորագրություն) Անուն,Ազգանուն

Կ.Տ.

«22» 05 2008 թ.

1872609

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

1 : 2000

(Մասշտաբ)




| Հատված | Երկարություն (մ) | Սահմանակից հարևան |
|---|---|---|
| 1 – 2 | 92.60 | Արթուր Արշալույսի Բուդաղյան |
| 2 – 3 | 31.05 | ճանապարհ |
| 3 – 4 | 100.66 | 316–046 |
| 4 – 1 | 32.56 | ճանապարհ |

Կատարող՝ (ստորագրություն) Ա. Մուրադյան (Անուն, Ազգանուն)

(ստորագրություն) Ա. Առաքելյան (Անուն, Ազգանուն)

## ՀՈՂԱՄԱՍԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

| | |
|---|---|
| ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ | 06-084-316-047 |
| ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ | Գյուղատնտեսական նշանակության հողեր |
| ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ | Վարելահող |
| ՀՈՂԱՄԱՍԻ ՉԱՓԸ (հա) | 0.2895 |
| ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ | Սեփականություն |

## ՇԵՆՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

| | |
|---|---|
| ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ | |
| ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ | |
| ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ | |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍ (քմ) | |
| ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ | |

## ՇԻՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

| Հ/Հ | ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ | ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ | ՄԱԿԵՐԵՍԸ (քառ.մ) | ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

Լրացուցիչ նշումներ, փոփոխություններ

Կատարող՝ (ստորագրություն) Ա. Մելիքյան (Անուն, Ազգանուն)

(ստորագրություն) Ն. Պողոսյան (Անուն, Ազգանուն)

ՎԿԱՅԱԿԱՆԸ ՏՐՎԱԾ Է Սեփականության ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

սեփականության (օգտագործման)

«Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն» ոչ առևտրային

սեփականատիրոջ(օգտագործողի) անունը անվանումը

կազմակերպությանը

Լոռու մարզ գ. Շահումյան

(անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը)

Հողամասի ՆԿԱՏՄԱՄԲ

Թիվ 3426, 20/05/2008 հաստատված առուվաճառքի պայմանագրի

(անշարժ գույքի ձեռքբերման իրավունքը հաստատող փաստաթղթի անվանումը)

ՀԻՄԱՆ ՎՐԱ

ԳՐԱՆՑՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ, ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ

06-084-005-002 ՄԱՏՅԱՆԻ 005 ՀԱՄԱՐԻ ՏԱԿ

ՍՈՒՅՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ԿԱԶՄՎԱԾ Է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ, ՄԵԿԸ ՏՐՎՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ (ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ), ՄՅՈՒՍԸ ՊԱՀՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՈՒՄ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ

ՂԵԿԱՎԱՐ (ստորագրություն) Գ. Անդրեասյան

Անուն,Ազգանուն

Կ.Տ.

« 22 » 05 2008 թ.

1872606

## ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

1 : 2000

(Մասշտաբ)




| Հատված | Երկարություն (մ) | Սահմանակից հարեւան |
|---|---|---|
| 1 – 2 | 106.04 | 316–041 |
| 2 – 3 | 36.80 | ճանապարհ |
| 3 – 4 | 101.54 | 316–039 |
| 4 – 1 | 38.35 | ճանապարհ |

Կատարող՝ Ա. Մուրադյան
(ստորագրություն) (Անուն,Ազգանուն)

Ա. Առաքելյան
(ստորագրություն) (Անուն,Ազգանուն)

## ՀՈՂԱՄԱՍԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

| | |
|---|---|
| ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ | 06-084-316-040 |
| ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ | Գյուղատնտեսական նշանակության հողեր |
| ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ | Վարելահող |
| ՀՈՂԱՄԱՍԻ ՉԱՓԸ (հա) | 0.3823 |
| ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ | Սեփականություն |

## ՇԵՆՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

| | |
|---|---|
| ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ | |
| ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ | |
| ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ | |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍ (քմ) | |
| ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ | |

## ՇԻՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

| Հ/Հ | ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ | ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ | ՄԱԿԵՐԵՍԸ (քառ.մ) | ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

Լրացուցիչ նշումներ, փոփոխություններ

Կատարող՝

(ստորագրություն) Ա. Մելիքյան (Անուն,Ազգանուն)

(ստորագրություն) Ն. Պողոսյան (Անուն,Ազգանուն)

ՎԿԱՅԱԿԱՆԸ ՏՐՎԱԾ Է Սեփականության ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

սեփականության (օգտագործման)

«Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն» ոչ առևտրային

սեփականատիրոջ(օգտագործողի) անունը անվանումը

կազմակերպությանը

Լոռու մարզ գ. Ծաղկաշատ

(անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը)

Հողամասի ՆԿԱՏՄԱՄԲ

Թիվ 3425, 20/05/2008 հաստատված առուվաճառքի պայմանագրի

(անշարժ գույքի ձեռքբերման իրավունքը հաստատող փաստաթղթի անվանումը)

ՀԻՄԱՆ ՎՐԱ

ԳՐԱՆՑՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ, ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ

06-084-005-002 ՄԱՏՅԱՆԻ 004 ՀԱՄԱՐԻ ՏԱԿ

ՍՈՒՅՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ԿԱԶՄՎԱԾ Է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ, ՄԵԿԸ ՏՐՎՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ (ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ), ՄՅՈՒՍԸ ՊԱՀՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՈՒՄ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ (ստորագրություն) Գ. Անդրեասյան

Անուն,Ազգանուն

Կ.Տ.

« 22 » 05 2008 թ.

1872607

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

1 : 2000

(Մասշտաբ)




| Հատված | Երկարություն (մ) | Սահմանակից հարևան |
|---|---|---|
| 1 – 2 | 108.76 | 316–042 |
| 2 – 3 | 33.82 | 316–062 |
| 3 – 4 | 106.04 | Արմենակ Գրիգորի Պետրոսյան |
| 4 – 1 | 33.63 | 316–014 |

Կատարող՝ _______ Ա. Մուրադյան
(ստորագրություն) (Անուն,Ազգանուն)

_______ Ա. Առաքելյան
(ստորագրություն) (Անուն,Ազգանուն)

## ՀՈՂԱՄԱՍԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

| | |
|---|---|
| ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ | 06-084-316-041 |
| ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ | Գյուղատնտեսական նշանակության հողեր |
| ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ | Վարելահող |
| ՀՈՂԱՄԱՍԻ ՉԱՓԸ (հա) | 0.3565 |
| ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ | Սեփականություն |

## ՇԵՆՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

| | |
|---|---|
| ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ | |
| ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ | |
| ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ | |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍ (քմ) | |
| ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ | |

## ՇԻՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

| Հ/Հ | ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ | ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ | ՄԱԿԵՐԵՍԸ (քառ.մ) | ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

Լրացուցիչ նշումներ, փոփոխություններ

Կատարող՝

(ստորագրություն) Ա. Մելիքյան (Անուն,Ազգանուն)

(ստորագրություն) Մ. Աբազյան (Անուն,Ազգանուն)

## ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՓՈԽՆԱԽԱՐԱՐ

Երևան, Կառավարական տուն N 1

ՀՀ քաղաքաշինության նախարար
պարոն [illegible]

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
պարոն Մ. Վարդանյանին

Լոռու մարզպետ
պարոն Ա.Քոչարյանին

---

Խնդրում եմ քննության առնել ՀԲԸՄ-ի 2008 թվականի մայիսի 16-ի թիվ 107-2259 գրությունը, առաջնորդվել օրենսդրությամբ սահմանված կարգով և արդյունքների մասին ներկայացնել տեղեկատվություն:

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

N 04-1205 «23» 05 2008 թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ 29.05.2008 029/583

04-381

[illegible]

Երևան, Կառավարական տուն

---

ՀՀ տարածքային կառավարման նախարար,
ՀՀ փոխվարչապետ
պարոն *Արմեն Գևորգյանին*

Խնդրում եմ աջակցել:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

№ 107-2259 «16» 05 2008 թ.

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԲԱԺԻՆ
ՄՈՒՏՔ ԹԻՎ 0-381
16 05


**ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION**
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

**ARMENIAN REPRESENTATION**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ**
9 Alex Manoogian St., Yerevan 0070, Armenia
Tel: (374 10) 51-22-51, Fax: (374 10) 51-22-52, E-mail: [illegible]


14 մայիսի, 2008

Տիար Տիգրան Սարգսյան
Վարչապետ Հայաստանի Հանրապետության

**Մեծարգո պարոն վարչապետ,**

Հայտնում եմ իմ խորին շնորհակալությունս Ձեզ, որ այս կարևոր ու բազմազբաղ ժամանակահատվածում կարողացաք ժամանակ տրամադրել Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության (ՀԲԸՄ) նախագահ Պրն. Սեդրակյանին և ինձ ընդունելու համար:

Ինչպես նշեցինք մեր հանդիպման ժամանակ, այս տարի ՀԲԸՄ-ն ձեռնամուխ է եղել չորս երիտասարդական ամառային ծրագրերի իրականացմանը, որոնց շրջանակներում 400-500 սփյուռքահայ երիտասարդներ աշխարհի տարբեր ծայրերից կայցելեն Հայաստան [illegible] Ձեր ուշադրությանը:

Գրում եմ Ձեզ այս ծրագրերից մեկի՝ սկաուտական ճամբարի ստեղծման հետ կապված խնդիրների վերաբերյալ: Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունն արդեն իսկ ձեռք է բերել 6,5 հեկտար ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողեր Լոռու մարզի Լերմոնտովո գյուղի հարևանությամբ, որտեղ նախատեսվում է 2008 թվականի հուլիսի 20-ից օգոստոսի 25-ն ընկած ժամանակահատվածում կազմակերպել սկաուտական ճամբար: Սփյուռքի շուրջ 300 երիտասարդներ կմասնակցեն այս ծրագրին: Հայաստարարություններս արդեն իսկ սփռված են սփյուռքահայ շրջանակներում աշխարհով մեկ և երիտասարդներն արդեն իսկ անհամբեր սպասում են հայրենիք այցելելուն:

Այս ծրագրի իրագործման հարցում անչափ շնորհակալ կլինեինք ներքոհիշյալ հարցերին Ձեր աջակցության համար.

- ՀԲԸՄ-ին սեփականության իրավունքով պատկանող 6,5 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողի կարգավիճակի փոփոխություն, որը թույլ կտար ՀԲԸՄ-ին այդ հողի վրա իրականացնել կառուցապատում սկաուտական ճամբար և ապագայում նաև ամառային ճամբար հիմնելու համար
- ճամբարի ստեղծման և գործունեության համար անհրաժեշտ լիցենզիաների և թույլտվությունների ստացում:
- սկաուտական ճամբարի նախագծի հաստատում, ժամանակավոր շարժական տնակների տեղադրման թույլտվություն ներառյալ հոսանքի, գազամատակարարման և ջրամատակարարման թույլտվություն
- սկաուտների համար վրանների տեղադրման թույլտվություն հարակից անտառածածկ տարածքում


**CENTRAL BOARD OF DIRECTORS:**
PRESIDENT - BERGE SETRAKIAN, VICE PRESIDENT - ARSHAVIR GUNDJIAN, TREASURER - SAM SIMONIAN, SECRETARY - BERGE PAPAZIAN.
HONORARY MEMBER - HIS HOLINESS KAREKIN II, Catholicos of All Armenians
MEMBERS - *United States* M. MICHAEL ANSOUR, CAROL BAGDASARIAN ASLANIAN, JOSEPH BASRALIAN, YERVANT DEMIRJIAN, NAZARETH FESTEKJIAN, ARDA HAROUTUNIAN, SARKIS JEBEJIAN, LEVON NAZARIAN, SINAN SINANIAN, DIKRAN TEVRIZIAN, *Argentina* RUBEN KECHICHIAN, *France* ARIS ATAMIAN, LEVON KEBABDJIAN, [illegible]
*Syria* VASKEN YACOUBIAN.
DIRECTOR EMERITUS - HARRY ZORTHIAN.
COUNCIL OF TRUSTEES - SARKIS DEMIRDJIAN, RICHARD [illegible]IGIAN, NAZAR NAZARIAN, LOUISE MANOOGIAN SIMONE, KARNIG YACOUBIAN
IN MEMORIAM - BOGHOS NUBAR, *Founder*, ALEX MANOOGIAN, *Honorary Life President*.


1684 809

107-234
14 05

Շնորհակալ կլինեինք վերահիշյալ հարցերում մեզ աջակցության և կառավարության համապատասխան գերատեսչություններին Ձեր միջնորդության համար:

Ցանկանում եմ ևս մեկ անգամ հաստատել ՀԲԸՄ-ի պատրաստակամությունն աջակցել **հայրենիքին և շարունակել իր բազմաբնույթ ծրագրերը նույն ոգևորությամբ և եռանդով**՝ էլ ավելի ամրապնդելով կապը սփյուռքի և մայր հայրենիքի միջև՝ ի բարօրություն և զորացում ողջ հայ ազգի:

Լավագույն մաղթանքներով և կանխավ հայտնած շնորհակալությամբ՝

Աշոտ Ղազարյան
ՀԲԸՄ Հայաստանի
Ներկայացուցչության տնօրեն





# AGBU ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

55 East 59th Street, New York, NY 10022-1112 U.S.A. T: 212 319-6383 • F: 212 319-6507/08 • E: agbuny@agbu.org • W: www.agbu.or

**ARMENIAN REPRESENTATION**

ՅԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ

9 Alex Manoogian St., Yerevan 0070, Armenia

Tel.: (37410) 51-22-51, Fax: (37410) 51-22-52, Email: agbu@aua.am


6 հունիսի, 2008

Տիար Արամ Քոչարյան

Լոռու մարզպետ

Հարգելի պարոն մարզպետ,

Ինչպես Ձեզ արդեն տեղեկացրել էի մեր հանդիպման ընթացքում, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը (ՀԲԸՄ) երիտասարդական ամառային ճամբար հիմնելու նպատակով ծեռք է բերել գյուղատնտեսական նշանակության հողեր Լոռու մարզի Լեռնանտոյի և Շահումյան գյուղերի վարչական տարածքներում: Այդ նպատակով հողերի վրա անհրաժեշտ է իրականացնել հողատարածքների նպատակային նշանակության փոփոխություն:

Ծրագրի հետագա իրագործման համար անչափ շնորհակալ կլինեինք ՀԲԸՄ-ին սեփականության իրավունքով պատկանող 5,79 հա ընդհանուր մակերեսով (Լեռնանտոյի գյուղի երկու՝ 2,22 և 2,35 հա և Շահումյան գյուղի չորս՝ 0,1935; 0,3823; 0,3565 և 0,2895 հա) գյուղատնտեսական նշանակության հողերի կարգավիճակի փոփոխության հարցում Ձեր աջակցության ու միջնորդության համար, որը թույլ կտար ՀԲԸՄ-ին այդ հողերի վրա իրականացնել կառուցապատում սպորտական ճամբար և ապագայում նաև ամառային ճամբար հիմնելու համար:

Կից ներկայացնում ենք սեփականության իրավունքով ՀԲԸՄ-ին պատկանող հողատարածքների սեփականության վկայականների պատճենները:

Կանխահայտ շնորհակալությամբ՝

Աշոտ Ղազարյան

ՀԲԸՄ Հայաստանի

Ներկայացուցչության տնօրեն

«ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ [illegible]

09.06.08

043/629


**CENTRAL BOARD OF DIRECTORS:**

**PRESIDENT** - BERGE SETRAKIAN. **VICE PRESIDENT** - ARSHAVIR GUNDJIAN. **TREASURER** - SAM SIMONIAN. **SECRETARY** - BERGE PAPAZIAN.

**HONORARY MEMBER** - HIS HOLINESS KAREKIN II, Catholicos of All Armenians.

**MEMBERS** - *United States:* M. MICHAEL ANSOUR, CAROL BAGDASARIAN ASLANIAN, JOSEPH BASRALIAN, YERVANT DEMIRJIAN, NAZARETH FESTEKJIAN, ARDA NAZERIAN HARATUNIAN, SARKIS JEBEJIAN, LEVON NAZARIAN, SINAN SINANIAN, DICKRAN TEVRIZIAN. *Argentina:* RUBEN KECHICHIAN. *France:* ARIS ATAMIAN, LEVON KEBABDJIAN. *Switzerland:* VAHE GABRACHE. *Syria:* VASKEN YACOUBIAN.

**DIRECTOR EMERITUS** - BARRY ZORTHIAN.

**COUNCIL OF TRUSTEES** - SARKIS DEMIRDJIAN, RICHARD MANOOGIAN, NAZAR NAZARIAN, LOUISE MANOOGIAN SIMONE, KARNIG YACOUBIAN.

**IN MEMORIAM** - BOGHOS NUBAR, *Founder;* ALEX MANOOGIAN, *Honorary Life President.*

AGBU **ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION**
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ
55 East 59th Street, New York, NY 10022-1112 U.S.A. Tel: 212 319-6383 • Fax: 212 319-6507/08. E-Mail: agbuny@agbu.org.
**ARMENIAN REPRESENTATION**
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ
9 Alex Manoogian St., Yerevan 0070, Armenia
Tel.: (37410) 51-22-51, Fax: (37410) 51-22-52, Email: agbu@aua.am

27 մայիսի, 2008

Հարգելի պարոն Քոչարյան,

Երիտասարդական ամառային ծրագրերի շրջանակներում Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը (ՀԲԸՄ) ձեռնամուխ է եղել սկաուտական ճամբարի ստեղծման աշխատանքներին: Այն նախատեսվում է իրականացնել Լոռու մարզի Լեռնանցքի և Շահումյան գյուղերի հարևանությամբ: 2008 թվականի հուլիսի 20-ից օգոստոսի 25-ն ընկած ժամանակահատվածում այս ծրագրին մասնակցելու նպատակով Սփյուռքից Հայաստան կժամանեն շուրջ 300 երիտասարդներ: Վերոհիշյալ տարածքում Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունն արդեն իսկ ձեռք է բերել 6,3 հեկտար ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ճամբարի ստեղծմանն աջակցելու խնդրանքով ՀԲԸՄ-ն արդեն իսկ նամակով դիմել է ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանին, որն էլ իր հերթին տվել է դրական գնահատական և հանձնարարականներ ուղարկել համապատասխան գերատեսչություններին՝ օրենքով սահմանված կարգով գործին ընթացք տալու համար:

Ծրագիրն արդեն իսկ իրականացման փուլում է. հողատարածքի գեոդեզիական հետազոտությունն ու ճամբարի հատակագծային պլանավորումն ավարտված են: Մեկ-երկու օրից Սիրիայից Հայաստան կժամանեն պատվիրված տնակներ, որոնք պիտի ծառայեն որպես աղմինիստրատիվ կառույցներ սկաուտական ճամբարի ներսում: Ճամբարը ժամանակին շահագործման հանձնելու համար մեզ անհրաժեշտ է շուտափույթ սկսել այդ տնակների մոնտաժման աշխատանքները և լուծել տարածքի կոմունիկացիոն հարցերը:

Այդ իսկ պատճառով ծրագրի հետագա իրագործման հարցում խնդրում ենք Ձեր նախնական թույլտվությունը շինարարական աշխատանքներն սկսելու համար:

Լավագույն մաղթանքներով և կանխահայտ շնորհակալությամբ՝

[illegible]արյան
ՀԲԸՄ Հայաստանի
Ներկայացուցչության տնօրեն

**CENTRAL BOARD OF DIRECTORS:**
**PRESIDENT** - BERGE SETRAKIAN. **VICE PRESIDENTS** - SARKIS DEMIRDJIAN, ARSHAVIR GUNDJIAN. **TREASURER** - NAZAR NAZARIAN. **SECRETARY** - JOSEPH BASRALIAN.
**HONORARY MEMBER** - HIS HOLINESS KAREKIN II, Catholicos of All Armenians.
**CHAIRMAN OF THE BOARD** - LOUISE MANOOGIAN SIMONE. **VICE CHAIRMAN** - NAZAR NAZARIAN. **MEMBERS** - *United States:* M. MICHAEL ANSOUR, CAROL BAGDASARIAN ASLANIAN, RICHARD MANOOGIAN, BENON SEVAN, SAM SIMONIAN, SINAN SINANIAN, DICKRAN TEVRIZIAN. *France:* ARIS ATAMIAN, LEVON KEBABDJIAN. *Syria:* KARNIG YACOUBIAN.
**IN MEMORIAM** - BOGHOS NUBAR, *Founder;* ALEX MANOOGIAN, *Honorary Life President.*